



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի երկրորդ կիսամյակում (վերլուծություն)

2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 108060 գործարք, որոնց քանակը, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 37.6 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 19.0 %-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 30569 օտարման գործարքի 76.3 %-ը կազմել է առուվաճառքը, 23.4 %-ը՝ նվիրատվությունը և

0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 38.7 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.5 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 40.8 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 22.4 %-ով: 2017 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 9096 առուվաճառքի գործարքի 65.3 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի երկրորդ կիսամյակում, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 41.5 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 28.7 %-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երկրորդ կիսամյակ 2016 թ.	Երկրորդ կիսամյակ 2017 թ.	առաջին կիսամյակ 2017 թ.
Կենտրոն	428250	456033	435500
Արաբկիր	357400	344433	347200
Քանաքեռ-Զեյթուն	283200	267350	273900
Նոր Նորք	254350	231067	243000
Ավան	261900	248233	254850
Էրեբունի	252400	236975	243100
Շենգավիթ	257900	242083	247200
Դավթաշեն	277000	254067	261600
Աջափնյակ	251200	228250	240200
Մալաթիա-Սեբաստիա	244200	232150	235500
Նուբարաշեն	157500	157350	156850
Միջինը Երևանում	275000	263500	267200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի երկրորդ կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, նվազել են 1.4 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 4.2%-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2487 բնակարան, որոնց քանակը 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 43.1 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 22.8 %-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Երկրորդ կիսամյակ 2016 թ.	Երկրորդ կիսամյակ 2017 թ.	առաջին կիսամյակ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116100	105500	110700
	Ապարան	58700	59200	58900
	Թալին	66900	62300	64050
Արարատ	Արտաշատ	99000	92000	95100
	Մասիս	115800	99900	108750
	Վեդի	101750	90500	95800
	Արարատ	77650	78300	77850
Արմավիր	Վաղարշապատ	154200	121200	143200
	Արմավիր	121250	91900	112250
	Մեծամոր	87600	69700	82500
Գեղարքունիք	Սևան	99400	80400	88700
	Գավառ	60700	51700	56900
	Մարտունի	107700	108250	106100
	Վարդենիս	45350	46100	45600
	Ճամբարակ	28800	28800	28800
Լոռի	Վանաձոր	88600	79000	86600
	Ստեփանավան	74800	66700	72100
	Սպիտակ	99900	88600	95300
	Ալավերդի	55900	48250	52800
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	30000	22100
Կոտայք	Արվյան	155150	151900	151400
	Նոր Հաճն	128550	119300	124000
	Բյուրեղական	108250	93000	100450
	Եղվարդ	110000	106800	106500
	Հրազդան	63900	56000	60300
	Ծաղկաձոր	292400	288000	290900
	Չարենցավան	85500	72600	80000
Շիրակ	Գյումրի	109450	87000	101600
	Արթիկ	67400	67000	67500
	Մարալիկ	41100	42300	41300
Սյունիք	Գորիս	124000	124850	124200
	Կապան	95500	96500	95800
	Սիսիան	92300	89800	90800
	Մեղրի	83400	91000	85400
	Քաջարան	95000	99150	96400
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95100	91700	93350
	Եղեգնաձոր	126400	120600	124000
	Ջերմուկ	113300	98500	107700
Տավուշ	Դիլիջան	115650	110400	111100
	Իջևան	118600	111800	114600
	Բերդ	60500	62000	60800
	Նոյեմբերյան	50500	51500	50700
	Այրում	31900	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ² մակերեսի շուկայական միջին գները, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, նվազել են 3.9%-ով, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 6.8%-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 3132 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևանում՝ 922, մարզերում՝ 2210: 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 62.9 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 58.1 %-ով, իսկ մարզերում՝ 64.9%-ով: 2017 թվականի երկրորդ կիսամյակում, 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 36.1 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 38.0 %-ով, իսկ մարզերում՝ 35.3 %-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	երկրորդ կիսամյակ 2016 թ.	երկրորդ կիսամյակ 2017 թ.	առաջին կիսամյակ 2017 թ.
Կենտրոն	476350	476400	476200
Արաբկիր	383200	381000	381600
Քանաքեռ-Զեյթուն	295100	283100	288600
Նորք-Մարաշ	319400	301500	307700
Ավան	270700	262550	265700
Էրեբունի	239800	243100	237000
Շենգավիթ	255100	230000	241000
Դավթաշեն	276150	269200	271300
Աջափնյակ	250200	240400	245600
Մալաթիա-Սեբաստիա	238200	234200	236400
Նուբարաշեն	150800	150000	150400
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286800	279200	282000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, նվազել են 1.0%-ով, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 2.6%-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Երկրորդ կիսամյակ 2016 թ.	Երկրորդ կիսամյակ 2017 թ.	առաջին կիսամյակ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	136250	130200	133900
	Ապարան	60050	51200	56850
	Թալին	69250	66000	67700
Արարատ	Արտաշատ	100100	97000	98700
	Մասիս	115100	110100	112900
	Վեդի	102300	90600	96500
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153150	148550	151600
	Արմավիր	107000	99500	104500
Գեղարքունիք	Սևան	94950	92500	93950
	Գավառ	57100	53950	55600
	Մարտունի	96200	95000	95600
	Վարդենիս	41150	41150	41150
	Ճամբարակ	31100	32000	31250
Լոռի	Վանաձոր	100900	98200	100100
	Ստեփանավան	91200	82400	88000
	Սպիտակ	114050	108000	111500
	Ալավերդի	50300	50700	50400
	Տաշիր	51900	45000	48600
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157350	155600	156600
	Նոր Հաճն	129800	126700	127800
	Բյուրեղավան	120500	110000	115000
	Եղվարդ	116100	109000	112500
	Հրազդան	82600	71000	76700
	Ծաղկաձոր	305000	300000	302700
	Չարենցավան	83000	80000	81000
Շիրակ	Գյումրի	119300	116000	118400
	Արթիկ	63450	60400	61900
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130050	128000	129400
	Կապան	100800	101200	100700
	Սիսիան	96500	96100	96000
	Մեղրի	84700	89000	85100
	Դաստակերտ	11610	11810	11710
Վայոց ձոր	Վայք	90150	88100	88800
	Եղեգնաձոր	116750	114000	115250
	Ջերմուկ	131300	129200	130100
Տավուշ	Դիլիջան	115700	115000	114500
	Իջևան	123250	120200	121900
	Բերդ	60100	57000	58600
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները

(ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ նվազել են 1.8%, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 3.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարվել է 10619 միավոր (11232.22 հա) հող, որից Երևանում՝ 640 միավոր (241.96 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 5994 միավոր (10457.83 հա), որից Երևանում՝ 78 միավոր (20.55 հա),

- բնակելի կառուցապատման հող՝ 3155 միավոր (278.22 հա), որից Երևանում՝ 281 միավոր (15.59 հա),

- հասարակական կառուցապատման հող՝ 1156 միավոր (112.16 հա), որից Երևանում՝ 254 միավոր (25.29 հա),

- արդյունաբերական օբյեկտների հող՝ 201 միավոր (323.49 հա), որից Երևանում՝ 25 միավոր (174.44 հա),

- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 56 միավոր (13.76 հա),

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 55 միավոր (46.58 հա), որից Երևանում՝ 2 միավոր (6.09 հա),

- ջրային հող՝ 2 միավոր (0.18 հա) ընդհանուր մակերեսով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 8900 միավորի (10068.71 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 521 միավոր (62.77 հա), նվիրատվության գործարք՝ 1664 միավոր (1154.85 հա), որից Երևանում՝ 104 միավոր (178.77 հա) և փոխանակության գործարք՝ 55 միավոր (8.66 հա), որից Երևանում՝ 15 միավոր (0.42 հա):

Հանրապետությունում 2017 թվականի երկրորդ կիսամյակում, 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 28.0 %-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 23.2 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 37.2 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 96.8 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 5283.10 հա, որից 5225.33 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 30.2 %-ը կամ 2686 միավորը (2142.05 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 139 միավոր (4.75 հա), իսկ 69.0 %-ը կամ 6142 միավորը (7821.94 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 375 միավոր (57.71 հա): 2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 72 գործարք (104.72 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարք:

Ստորև ներկայացված են 2017 թվականի երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշա- նակության հողեր		Արդյունա- բերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշա- նակության հողեր		Արդյունա- բերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ (տնամերձ) հողեր		Հասարակա- կան կառուցա պատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակա- կան կառուցա- պատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	5	0.97	48	1.46	86	2.31	49	11.71	16	10.27	179	10.04	129	19.60
Արագածոտն	226	560.09	18	1.04	38	3.55	59	4.30	636	636.36	2	0.01	157	19.86	14	1.08
Արարատ	182	413.80	14	4.39	90	6.15	57	1.98	569	362.86	6	9.41	295	25.91	41	1.19
Արմավիր	52	133.15	10	11.41	17	1.53	32	1.35	562	5092.18	13	3.74	376	38.76	23	0.75
Գեղարքունիք	61	69.61	20	4.98	94	10.10	115	15.97	512	300.56	6	2.15	76	9.39	19	3.48
Լոռի	43	73.91	12	1.40	47	0.54	85	2.00	265	174.95	1	0.15	49	5.52	19	0.91
Կոտայք	287	491.56	12	1.67	383	29.31	115	4.38	779	470.65	13	8.19	434	36.08	63	6.09
Շիրակ	31	56.28	3	13.96	34	1.96	44	2.55	223	219.56	0	0.00	50	5.35	4	0.23
Սյունիք	24	32.77	8	2.63	28	0.18	17	1.21	102	126.92	4	1.52	57	4.54	18	1.17
Վայոց ձոր	87	112.36	9	2.43	27	1.89	25	1.20	77	79.81	1	0.44	35	2.85	13	0.54
Տավուշ	25	16.51	13	2.95	25	1.43	28	1.17	172	96.61	0	0.00	60	6.25	7	0.26
Ընդամենը	1018	1960.04	124	47.83	831	58.1	663	38.42	3946	7572.17	62	35.88	1768	164.55	350	35.30

Ստորև ներկայացված են 2017 թվականի երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանա-կության հողերի		Գյուղ. նշանա-կության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողերի		հասարակա կան կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)
Երևան	84	2.62	4	0.96	35	0.53	45	1.13	55	2.13	0	0.00	1	0.01	13	0.94	41	1.18
Արագածոտն	7	0.21	2	0.18	2	0.02	3	0.01	326	499.65	218	490.97	16	0.86	36	3.53	56	4.29
Արարատ	22	3.66	2	3.18	9	0.13	11	0.35	302	299.95	163	291.10	12	1.21	81	6.01	46	1.63
Արմավիր	11	0.131	1	0.001	4	0.04	6	0.09	99	147.22	51	133.07	9	11.41	13	1.48	26	1.26
Գեղարքունիք	29	1.25	2	0.07	11	0.35	16	0.83	259	96.86	59	67.07	18	4.91	83	9.74	99	15.14
Լոռի	46	0.86	1	0.50	21	0.24	24	0.12	136	26.99	38	23.91	11	0.90	26	0.30	61	1.88
Կոտայք	57	1.29	1	0.05	39	1.14	17	0.10	728	494.22	275	460.15	11	1.62	344	28.17	98	4.28
Շիրակ	22	1.03	1	0.70	6	0.04	15	0.29	90	73.72	31	56.28	2	13.26	28	1.92	29	2.26
Սյունիք	23	1.41	1	1.23	19	0.08	3	0.10	52	34.82	22	32.21	7	1.40	9	0.10	14	1.11
Վայոց ձոր	5	0.16	0	0.00	2	0.01	3	0.15	142	117.73	86	112.36	9	2.43	25	1.88	22	1.06
Տավուշ	17	0.38	0	0.00	10	0.32	7	0.06	73	21.65	24	16.48	13	2.95	15	1.10	21	1.12
Ընդամենը	323	13.00	15	6.87	158	2.90	150	3.23	2262	1814.94	967	1683.60	109	40.96	673	55.17	513	35.21

Հանրապետությունում 2017 թվականի երկրորդ կիսամյակում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 51 գործարք (276.45 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի երկրորդ կիսամյակում, 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է

2.0 անգամ: Ընդ որում, Երևանում նվազել է 9.8 %-ով, իսկ մարզերում աճել է 2.1 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.0 անգամ, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 2.3 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 83.2 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.2 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի երկրորդ կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (հա)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (հա)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մոտավելադու յն	Միջին			Նվազագույն	Մոտավելադու յն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	177	355.10	40.1	2352.8	284.5	429	301.19	365.0	12000.0	3428.3
Ապարան	10	9.85	66.9	2453.0	352.9	19	14.65	86.5	2727.3	660.8
Թալին	28	125.94	37.6	400.2	131.3	93	208.21	93.6	5494.5	681.2
Ծաղկահովիտ	3	0.08	1540.0	2420.0	1963.3	49	107.80	79.5	1000.0	440.4
Արարատի մարզ										
Արտաշատ	97	68.88	70.6	4519.1	615.8	227	85.32	335.1	10833.3	2711.3
Մասիս	17	51.54	59.5	998.6	194.4	99	46.25	200.0	11904.8	3387.0
Վեդի	49	170.68	17.8	9121.3	2074.7	230	228.45	207.0	10795.1	1962.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	17	43.93	61.2	2284.8	193.1	264	161.52	294.3	9090.0	1519.6
Բաղրամյան	17	17.61	70.9	709.0	164.3	108	4778.04	90.6	2561.1	794.7
Վաղարշապատ	17	71.53	33.8	3190.0	676.0	175	115.87	444.4	11764.7	2104.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	3	2.68	185.1	331.7	236.1	217	67.17	199.8	1875.0	543.3
Ճամբարակ	15	10.08	287.6	17500.0	2348.7	12	10.92	60.5	953.3	349.5
Մարտունի	12	27.31	53.2	1591.0	395.2	13	2.11	51.1	2850.0	731.7
Սևան	5	1.74	172.5	2200.0	812.3	213	81.38	52.2	2134.8	372.6
Վարդենիս	24	25.27	118.2	1750.0	630.2	56	136.19	41.2	2575.1	359.9
Լոռու մարզ										
Ալավերդի	11	2.20	630.3	2513.6	2137.4	42	23.17	170.4	6424.2	541.2
Գուգարք	20	13.10	172.8	1606.3	1152.9	62	15.45	234.6	6065.9	812.4
Սպիտակ	1	0.49	279.6	279.6	279.6	7	3.81	250.0	5555.5	648.3
Ստեփանավան	3	0.93	167.8	1455.4	917.9	56	49.05	90.6	1686.6	427.5
Տաշիր	3	7.20	506.0	536.5	516.2	91	79.89	45.3	1384.4	187.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	93	210.34	76.1	5783.3	482.3	324	116.90	279.3	11942.7	3892.8
Եղվարդ	120	173.56	67.5	4722.6	556.7	352	254.15	174.4	11971.8	2534.4
Հրազդան	62	76.26	80.9	3750.0	461.9	84	76.31	130.5	10256.4	1132.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	5	3.33	124.6	329.5	255.5	62	65.19	252.0	1693.1	725.9
Ամասիա						20	36.66	40.9	261.0	146.2
Անի	4	4.54	88.1	305.3	184.7	51	51.09	110.6	546.9	471.8
Աշոցք	2	0.04	7000.0	7000.0	7000.0	11	9.61	58.5	215.8	143.3
Արթիկ	20	48.37	47.2	660.2	328.2	59	54.34	79.4	1428.6	545.6

Սյունիքի մարզ										
Գորիս						23	37.77	92.6	1023.2	669.8
Կապան	7	20.73	77.0	473.0	235.6	9	9.99	120.0	841.6	465.8
Մեղրի	5	1.78	1150.0	3740.0	1731.1	15	13.19	193.0	3000.0	865.0
Սիսիան	10	9.71	69.0	236.5	165.9	52	64.96	46.3	1977.4	504.3
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	75	86.74	18.7	1539.3	185.5	39	39.78	125.0	10000.0	1867.8
Վայք	11	25.62	25.5	201.3	56.9	38	40.03	58.8	1430.7	653.3
Տավուշի մարզ										
Բերդ	4	1.51	217.5	360.4	307.8	51	11.61	213.3	3783.8	741.4
Իջևան	15	13.51	43.7	1050.0	341.4	18	8.17	267.5	9454.5	1647.5
Նոյեմբերյան	5	1.46	330.5	670.9	541.7	99	76.18	46.7	7368.4	1077.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի առաջին կիսամյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (քմ)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (քմ)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	20	21992.0	137.5	4996.2	2114.1	121	126668.1	130.7	22200.0	2591.9
Ապարան	9	7248.8	256.0	3333.3	1245.5	16	20227.5	124.1	609.6	390.7
Թային	3	4812.0	151.2	235.0	193.1	13	25161.0	63.2	1454.8	152.5
Ծաղկափոխ	4	1255.5	222.0	236.3	231.9	4	21394.0	60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ	50	49853.1	416.7	1617.5	574.6	87	85277.6	173.9	7140.3	902.2
Մասիս	19	6619.2	854.7	6065.0	2621.7	132	97682.7	187.5	25000.0	1203.8
Վեդի	12	3671.0	155.5	2500.0	1119.2	73	73689.9	126.1	5000.0	663.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	12	14163.8	850.6	3528.0	2189.3	121	146713.8	131.6	9090.9	1216.2
Բաղրամյան						8	8162.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	1	680.0	1367.6	1367.6	1367.6	238	223993.7	197.4	26528.4	1530.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	22	25612.6	125.1	193.8	157.4	15	20726.0	186.6	1084.3	683.0
Ճամբարակ	2	3023.6	102.4	104.0	103.2	8	4409.0	71.3	2286.2	147.0
Մարտունի	30	33624.0	122.2	377.1	247.1	29	32312.9	119.3	5000.0	277.0
Սևան	6	1650.7	241.8	1742.7	1115.1	13	16858.3	240.0	3110.4	351.7
Վարդենիս	23	33528.5	79.2	1470.0	562.2	10	18826.6	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի	3	1063.7	161.8	4200.0	1408.2	17	25767.2	114.3	1388.9	216.9
Գուգարք	21	736.9	2105.4	3528.3	2260.8	16	12904.3	77.9	14083.3	1258.4
Սպիտակ						8	7348.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան	1	1180.0	580.8	580.8	580.8	6	5761.3	88.2	1666.7	176.0
Տաշիր	1	39.0	561.5	561.5	561.5	1	777.7	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	104	50173.8	342.5	9800.0	2609.7	230	187150.2	264.5	35353.5	1959.0
Եղվարդ	215	221794.7	210.8	5037.5	1007.3	177	153395.3	173.6	27000.0	2853.4
Հրազդան	25	9745.4	416.7	4976.4	2396.2	27	20276.6	117.7	34848.5	1317.0

Շիրակի մարզ										
Ախուրյան	16	5220.6	233.0	5232.6	1538.1	30	22658.0	113.6	18750.0	333.3
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	1	1203.6	73.3	73.3	73.3	6	14678.0	67.9	180.6	217.0
Աշոց								40.8	144.0	65.0
Արթիկ	11	12772.5	122.5	2752.3	1340.8	12	15422.0	111.8	5000.0	217.0
Սյունիքի մարզ										
Գորիս						16	11774.7	112.2	1700.0	365.7
Կապան	6	658.8	1020.0	3200.0	1696.3	8	4987.0	67.9	2638.9	387.1
Մեղրի	2	138.5	840.0	900.0	870.0	8	6381.6	68.5	632.9	269.8
Սիսիան	1	193.0	359.0	359.0	359.0	24	21721.0	123.5	875.0	264.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	22	17676.2	59.5	755.0	226.3	30	24350.0	96.7	7659.6	505.2
Վայք	3	1124.1	468.6	1050.0	760.9	5	4188.0	120.7	1448.3	251.8
Տավուշի մարզ										
Բերդ						10	7591.3	75.8	810.0	132.0
Իջևան	11	8989.6	48.9	3000.0	1915.9	39	38550.1	74.1	14423.1	470.6
Նոյեմբերյան	4	2034.3	110.0	891.1	413.1	9	14772.5	125.0	1948.1	259.0

2017 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5507 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.1 %-ը:

2017 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 37.5 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 45.6 %-ով :

2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 172 բնակարանի, 121 անհատական բնակելի տան, 2016 հասարակական և 715 արտադրական նշանակության օբյեկտի, 2433 միավոր հողի, 2 այգետնակի և 48 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 41 վարձակալության գործարքի քանակը, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 95.2 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 51.9 %-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալված 26747.69 հա հողից 2.58 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 26745.12 հա հողի 26336.72 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 226.43 հա՝ արդյունաբերական օբյեկտի, 26.18 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Վայոց ձորի մարզում՝ 11941.89 հա, որից 11862.85 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13578 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.6 %: 2017 թվականի երկրորդ կիսամյակում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 26.3 %-ով , իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 11.8 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանի (52.6 %), անհատական բնակելի տան (22.8 %), հասարակական նշանակության օբյեկտի (10.6 %) և հողի (7.8 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7944 գրավադրման գործարքներից ծագող

իրավունքների պետական գրանցումների քանակը, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 26.1 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 25.4 %-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրավադրվել է 3092.87 հա մակերեսով հող, որից 33.73 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողի 96.7 % կամ 2992.04 հա գյուղատնտեսական նշանակության է, որից Երևանում՝ 2.33 հա: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 1640.60 հա, որից 1629.85 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 2383 գործարք, որից 1920 Երևանում: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 2.6 անգամ, ընդ որում Երևանում՝ 2.7 անգամ, իսկ մարզերում՝ 2.1 անգամ: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, աճել է 2.5 անգամ, ընդ որում Երևանում՝ 2.9 անգամ, իսկ մարզերում՝ 55.4 %-ով:

2017 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 15361 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 47.1 %-ով, իսկ 2016 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 22.4 %-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.2 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում 23.2 %:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե